ΙΩΑΝΝΟΥ Ε. ΚΑΡΑΓΙΑΝΝΟΠΟΥΛΟΥ, Ἡ Βυζαντινή ἱστορία ἀπό τάς πηγάς, Θεσσαλονίκη, 1974, 298 σελ.

Ի. Ե. ԿԱՐԱՅԱՆՆՈՊՈՒԼՈՍ, Բյուզանդական պատմությունը ըստ աղբյուրների, *Թեսալոնիկե, 1974, 298 էջ։*

Ի. Ե. Կարայաննոպուլոսը նպատակ է ունեցել ընթերցողին ներկայացնել Բյուզանդական կայսրության հազարամյա պատմության ոչ թե ուսումնասիրությունը, այլ այդ պատմությունը բյուզանդական գրավոր աղբյուրներից ընտրված քաղվածքների հիման վրա։ Նա ցանկացել է, իր ասելով, որ ընթերցողը լսի ոչ թե ժամանակակից հեղինակի ձայնը, այլ դարերի խորքից եկող «բյուզանդական ձայնը» պետության մասին տեսության, նրա կազմակերպման, տնտեսության, հասարակության կազմակերպման ու կառուցման վերաբերյալ։ Հեղինակը աղբյուրներից ընտրել է այնպիսի քաղվածքներ, որոնք վերաբերում են Բյուզանդիայի ներքին պատմությանը, որովհետև, ինչպես գրում է նա, «դրա լավ իմացությունը պարտադիր նախապայման է ավելի քան հազար տարվա կյանք ունեցած բյուզանդական անցյալը ճանաչելու համար»։

Աշխատությունը բաղկացած է չորս գլխից։

Առաջին գլուխը, *որ վերնագրված է «Կայսերական իշխանության մասին տեսությունը», բաժանված է տասնմեկ ենթագլուխների, որտեղ աղբյուրներից ընտրված քաղվածքները վերաբերում են՝ 1) կայսերական իշխանության ծագման բյուզանդական տեսությանը, որի համաձայն կայսեր իշխանությունը տրված է աստծո կողմից. 2) կայսերական իշխանության բնույթին, որը բնորոշվում է որպես «ծառայություն առ աստված». 3) կայսեր կոչմանը, որի համաձայն նա պետք է պետությունը կառավարի ելակետ ունենալով արդարությունն ու մարդասիրությունը. 4) կայսեր և օրենքին, որտեղ ցույց է տրված, որ կայսրը կանգնած է օրենքից վեր, որ նա կենդանի օրենքն է, բայց պետք է հարգի իր կողմից ընդունված օրենքները և միշտ կառավարի համաձայն այդ օրենքների. 5) կայսեր և եկեղեցու փոխհարաբերությունների հարցին. 6) կայսերակիցներին և նրանց իրավասությունների սահմաններին. 7) բյուզանդական կայսեր հռչակման ու թագադրության արարողությանը. 8) կայսերական նշանակներին. 9) կայսերական տիտղոսին ու ստորագրությանը. 10) կայսերակցի թագադրության արարողությանը և 11) հարստության (դինաստիայի) մասին հասկացությանը։*

Դժվար չէ նկատել, որ Կարայաննոպուլոսը աղբյուրներից բերում է այնպիսի քաղվածքներ, որոնք պատասխան են տալիս այն հարցին, թե ինչպիսին պետք է լինի կայսրը, ինչպես պետք է նա կառավարի, ինչպիսի օրենքներ պետք է նա հաստատի. բայց իրականում այդ չէր իրագործվում։ Վերոհիշյալ բազմաթիվ հարցերի վերաբերյալ ընթերցողին մատուցվում է պաշտոնական տեսակետը, ընթերցողը զուրկ է իրերի ճշմարիտ ու իրական վիճակի հետ ծանոթանալու հնարավորությունից։

Երկրորդ գլուխը, *որ վերնագրված է «Հռոմեական (բյուզանդական) պետականությունը», բաժանված է երկու ենթագլուխների, որտեղ բերված նյութը վերաբերում է. ծերակույտին, հյուպատոսներին և դեմոսներին, բյուզանդական պետության առավելություններին ու թերություններին։ Առաջին ենթագլխի կապակցությամբ պետք է ասել, որ դեմոսների մասին պատկերացումը հեռու է իրականությունից։ Թեոփանեսից բերված երկու հատվածները, որտեղ դեմոսները ներկայացված են որպես պետությանը ենթակա կազմակերպություններ, որոնց հիմնական պարտականությունն էր վտանգի դեպքում պաշտպանել մայրաքաղաքի պարիսպները, վերաբերում են ուշ շրջանին, երբ դեմոսները կորցրել էին քաղաքական կուսակցությունների իրենց դեմքը, ինչպիսին ունեին V—VI դդ., երբ նրանք հսկայական քաղաքական դեր էին խաղում՝ հատկապես Կոստանդնուպոլսում։ Երկրորդ ենթագլխի վերաբերյալ աղբյուրներից բերված են տվյալներ, որոնք Բյուզանդական կայսրության թուլությունը կապում են պետական պաշտոնյաների կամայականությունների, նրանց այլասերման, պաշտոնները վաճառքի առարկա դարձնելու փաստի հետ։*

Երրորդ գլուխը *վերնագրված է «Պետական կազմակերպությունը»։ Այստեղ բերված նյութը վերաբերում է. կառավարող պաշտոնեությանը (պրետորյան էպարքոս, օֆֆիկիաների մագիստրոս, քաղաքի էպարքոս, քվեստոր, «ի վերա հայցմանց», սֆենդոնեի պարակիմոմենոս, պրոտոասեկրետես, բանակաթեմերի ղեկավարություն և այլն), պաշտպանությանը (բանակ, բանակի կադրեր, զինված ուժերի կազմակերպություն, զինվորների ընտրություն, զինվորագրում, զինվածություն, բանակատեղիներ, զորավարժություններ, վարձատրություն, պաշտպանական սիստեմ, նավատորմիղ, զենքի տեսակներ, հեղուկ կրակ և այլն), ֆինանսներին,*

որտեղ խոսվում է նախ և առաջ վաղ բյուզանդական շրջանի կենտրոնական տնտեսական վարչության մասին («սրբազան գանձերի կոմեսի» և «սեփական ունեցվածքի կոմեսի» մասին, որոնց վրա Անաստասիոս կայսեր ժամանակ ավելացավ «սեփական կայքի կոմեսի» պաշտոնը), կալվածների («տների»), հարկային սիստեմի մասին, որտեղ, ի միջի այլոց, բերված է Անաստասիոս I կայսեր 496 թ. օրենքը «Հայկական» (Ἀρμενιακά) կոչված հարկերի վճարման պարբերացման վերաբերյալ, պետական մենաշնորհի (մոնոպոլիոնի) մասին (այդ թվում ցորենի վաճառքի), զինագործության պետական մոնոպոլիաների մասին, հարկերի տեսակների (ալլիլենգիոն, խրիսարգիրոն, աերիկոն, սինոնե, դիկերատոն), մաքսի մասին և այլն։ Հաջորդ ենթագլուխը նվիրված է դիվանագիտությանը։ Իհարկե, չի կարելի համաձայնվել բյուզանդական դիվանագիտության վերաբերյալ Ի. Կարայաննոպուլոսի հայտնած կարծիքի հետ (որից ելնելով էլ նա աղբյուրներից համապատասխան հատվածների ընտրություն է կատարում)։ Հեղինակի ասելով «Բյուզանդական պետության պատմությունը դա պետության պաշտպանության պատմություն է ընդդեմ բազմապիսի օտար ժողովուրդների, որոնք ամեն տեղից հարձակվում էին՝ մտադիր լինելով կործանել այն» (էջ 113)։ Հայ ժողովրդի դարավոր պատմությունը շատ հստակ վկայում է, որ բյուզանդական պետությունը մտահոգված էր ոչ միայն պաշտպանությամբ, այլև նոր երկրների նվաճմամբ։ Այստեղ բերված հատվածները խոսում են օտար պետությունները բյուզանդական դեսպաններ առաքելու, օտար դեսպանների ընդունելության, հաշտության պայմանագրերի, «բարբարոսների» մեջ քրիստոնեություն տարածելու, օտար երկրներ լրտեսներ ուղարկելու, ռազմագերիների փոխանակության շուրջ բանակցություններ վարելու մասին և այլն։ Հինգերորդ ենթագլուխը նվիրված է եկեղեցուն։ Այս ենթագլխում խոսվում է եկեղեցական կազմակերպության, պետության հետ նրա ունեցած փոխհարաբերությունների մասին և այլն։ Այստեղ ևս ընտրված նյութը միակողմանի է, 10 հատվածներից 9-ը կայսերական օրենսդրական ակտեր են, որոնցից եկեղեցու սոսկ պաշտոնական դեմքն է երևում և ոչ թե իրականը։ Արդարադատության հարցերին նվիրված հետևյալ ենթագլխի համար ընտրված նյութը կոչված է ցույց տալու արդարադատության կազմակերպումը և այն, թե ինչպես, հեղինակի ասելով, բյուզանդական օրենսդրությունը ջանքեր էր թափում «պաշտպանելու թույլերի իրավունքների ոտնահարումը» (էջ 140)։ Քաղվածքներ են բերված գլխավորապես Հուստինիանոս I-ի նովելլաներից (11 հատված), այսինքն վերաբերում են VI դարի առաջին կեսին, երեք քաղվածք վերաբերում են XII—XIV դդ., մեկ քաղվածք բերված է Լևոն VI-ին վերագրված «Էպարքոսի գրքից»։ Դժվար չէ եզրակացնել, որ նյութի այսպիսի ընտրությունը չի կարող տալ բյուզանդական արդարադատության լիակատար ու ճիշտ պատկերը։ Անտեսված է իսավրացիների և մակեդոնացիների օրենսդրությունը։

Գրքի չորրորդ գլուխը նվիրված է «Հասարակական ու տնտեսական կյանքին»։ Այն ամենաընդարձակն է և բաժանված է չորս ենթագլուխների. 1) Կայսերական արքունիքն ու նրա արարողականը (կայսեր ամուսնություն, թագաժառանգի ծնունդ, կայսեր ծննդյան օրվա նշում, կայսեր թաղում, կայսրերին երկրպագելու կարգը, կայսեր արշավանքից վերադառնալու առնչությամբ տեղի ունեցած ընդունելության կարգը, կայսերական հարսնացուի ընտրություն, արքունական խաղեր), հարցեր, որոնք, մեր կարծիքով, այնքան էլ չեն կապվում վերնագրում նշված խնդրին, և պատահական չէ, որ 2-րդ ենթագլուխը կրում է հետևյալ խորագիրը «Բյուզանդական հասարակությունը»։ Այս բաժնի նյութը վերաբերում է բյուզանդական հասարակության դասակարգերին և դասերին, որոնց հեղինակը ենթաբաժանում է հետևյալ կերպ. սենատորներ, քաղաքային բնակչության բարձրագույն խավեր, քաղաքային ստորին խավեր և գյուղացիական դասակարգ։ Սրանցից բացի նա նշում է նաև տնային և գյուղատնտեսական ստրուկներին։ Բերված փաստական նյութը, նախ և առաջ Ֆիլարետոսի (702—792 թթ.) վարքից. շատ արժեքավոր է. այն տալիս է չքավոր ու մեծատուն գյուղացիության վիճակի վառ պատկերը։ Թարգմանարար բերում ենք Ֆիլարետոսի վարքի այդ երկու հատվածները. «Մի չքավոր գյուղացու եզը, հողը հերկելիս, հանկարծ ընկնում ու սատկում է։ Չկարողանալով դժբախտությունը տանել, գյուղացին սկսեց բարձրաձայն լալ ու ողբալ, և դիմելով աստծուն, ասաց. «Տեր, ես ոչինչ չունեի այդ լծկանից բացի և դրանից էլ դու ինձ զրկեցիր։ Արդ, ես ինչպե՞ս կերակրեմ իմ կնոջը և ինը մանկահասակ երեխաներին։ Կայսրին հարկ ինչպե՞ս վճարեմ։ Տեր, դու գիտես, որ սատկած եզը պարտքով էր առնված։ Չգիտեմ ինչ անեմ, պիտի լքեմ իմ տունն ու փախչեմ մի հեռավոր երկիր, նախքան պարտապաններս իմանան և իմ վրա խուժեն վայրի գազանների պես»։ Երկրորդ հատվածը պափլագոնացի ս. Ֆիլարետոսի մասին է, որ «շատ հարուստ էր, ուներ բազմաթիվ անասուններ. վեց հարյուր կով, հարյուր զույգ եզ,

ութ հարյուր արածող ձի, ութսուն գրաստ՝ ձի և ջորի, 12 հազար ոչխար, քառասունութ պռաստին (գյուղ) և այլն»։

Այս քաղվածքներում բերված են տվյալներ ստրուկների, ապա և ֆեոդալ-դինատների դեմ պետության ձեռնարկած միջոցառումների, զինվորական կալվածների, իմունիտետի, դավանաբանական պայքարի, պատկերամարտության, դպրոցական կյանքի, դերասանների ու պարողների մասին և այլն։

Երրորդ ենթագլուխը նվիրված է քաղաքներին և քաղաքային բնակչությանը։ Աղբյուրներից ընտրված հատվածները վերաբերում են կուրիալներին, քաղաքապետերին, արհեստավորական կորպորացիաներին (որտեղ լայնորեն օգտագործված է «Էպարքոսի գիրքը»), քաղաքաշինությանը, առևտրին, դրամաշրջանառությանը և այլն։ Այս բաժնի նյութը գլխավորապես վերաբերում է VI դարին (Հուստինիանոս I-ի օրենսգիրքը) և IX—X դդ. («Էպարքոսի գիրքը»)։

Վերջին՝ չորրորդ ենթագլուխը վերաբերում է գյուղական բնակչությանն ու ագրարային հարաբերություններին։ Այստեղ խոսվում է կոլոնների, իմունիտետի, ագարակների և պռաստինների, հողի բաժանման, գյուղատնտեսական աշխատանքների, անասնապահության, ձկնորսության մասին և այլն։

Ի. Կարայաննոպուլոսն իր գրքի վերջում տալիս է երեք մասից բաղկացած մատենագիտություն (աղբյուրներ, ժողովածուներ և մենագրական ուսումնասիրություններ)։

Որպես աշխատության հիմնական թերություն պետք է նշել այն, որ բազմազան ու բազմապիսի հարցերի վերաբերյալ ընտրված նյութը վերաբերում է կոնկրետ ժամանակաշրջանների և չի արտացոլում կայսրության հազարամյա պատմության ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները։ Հեղինակը ցանկություն է ունեցել ընթերցողին հասցնել դարերի խորքից եկող «բյուզանդական ձայնը», սակայն չպետք է մոռանալ, որ այդ «ձայնը» իրականում մեներգի ձայն չէր, այն բազմերանգ էր ու բազմահնչյուն։ Ընթերցողը լսում է այն աղբյուրների ձայնը, որոնցից Կարայաննոպուլոսը ընտրություն է կատարել։ Դա մեծ մասամբ պաշտոնական ձայնն է։ Աշխատությունը շատ կշահեր, եթե հեղինակը օգտագործած լիներ քառորդ դար առաջ սովետական բյուզանդագետների հրատարակած «Сборник документов по социально-экономической истории Византии» (М., 1951) ժողովածուն, որտեղ տրված է խնդրի զարգացման դինամիկան և որտեղից լսելի են ոչ միայն պաշտոնական ձայները։

Չնայած թերություններին, Ի. Կարայաննոպուլոսի ժողովածուն օգտակար է, քանի որ այնտեղ ի մի բերված փաստական հարուստ նյութը օգնում է գաղափար կազմելու այս կամ այն ժամանակաշրջանում Բյուզանդիայի ներքին կյանքի՝ տարբեր կողմերի մասին։

Պատմ. գիտ. դոկտոր Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

HEIDE und HELMUT BUSCHHAUSEN, *mit hilfe von* EVA ZIMMERMANN, *Die illuminierten armenischen Handschriften der Mechitaristen-Congregation in Wien*, Wien, 1976, S. 113, Abb. 250 farb.

ՀԱՅԴԵ և ՀԵԼՄՈՒՏ ԲՈՒՇՀԱՈՒԶԵՆՆԵՐ, *աշխատակցությամբ* ԵՎԱ ՑԻՄՄԵՐՄԱՆԻ, Վիեննայի Մխիթարյան միաբանության հայկական ձեռագրադարանի նկարազարդ ձեռագրերը, *Վիեննա, 1976, 113 էջ, 250 գունավոր վերարտադրություն։*

Հայկական մանրանկարչությանը նվիրված այս նոր ալբոմ-ձեռագրացուցակը հասարակության ուշադրությանն է ներկայացնում Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի դանձերից 40 լավագույն նկարազարդ ձեռագրեր։ Գիրքը հրատարակել են պրոֆեսոր, դոկտոր Հելմուտ Բուշհաուզենը և իր կինը՝ Հայդե Բուշհաուզենը (աշխատակցությամբ Եվա Ցիմմերմանի), Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացու ծննդյան 300-ամյա հոբելյանի առթիվ։

Սույն հրատարակությունը իրենից ներկայացնում է և՛ մանրակրկիտ ձեռագրացուցակ, և՛ մանրանկարչական ալբոմ, և՛ ուսումնասիրություն՝ նվիրված գրքում ընդգրկված ձեռագրերի մանրանկարներին։ Աշխատության հեղինակները, ինչպես նշվում է առաջաբանում, ծանոթանալով Վիեննայի Մխիթարյանների 2000 գրչագրերին, նրանցից ընտրել են մանրանկարչական արվեստի տեսակետից ամենաարժեքավորները, որոնցից ալբոմում ներկայացված են 250 գունավոր վերարտադրություններ։